# ԼՈՒՍԱԲԵՐ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Կազմեցին

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ եւ Լ. ՍԵՂԲՈՍԵԱՆ

Պատկերազարդեց

Վ. ԱԽԻԿԵԱՆ



Վեցերորդ տիպ

*Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդուածներու, ինչպէս եւ մեր նկարներու արտատպութեան իրաւունքը վերապահուած է*

Հրատարակութիւն

«ՀԱՅԿԱՇԷՆ» գրատան

1929

Յ. Մ. ՍԷԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ
ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Թիւ 126




ա

Ա ա

Ա ա բ





պար
պարապ
պապ
ապա



կար
կարապ
կապ
կապար



աս. կաս. պակաս. կարաս



պ, կ

կապիկ
իր. կիր
կիրակի
ապակի



մամ. պապ
մամիկ. պապիկ
իմ մամիկս
իմ պապիկս



մաս. միս. ամիս. կամ. կամար

ի, մ



Մատ

Մատիտ

Մատիտ պիտի տամ.
տար. կատար. կատակ.
տար պատի տակ



Մատանի



ան, աման, տանի
պանիր պիտի տանի
կին, տիկին,
տանտիկին,
Ես, նամակ տանիմ պապիկին:







Նաւ

Նաւակ

տաւար. սաւան
պատիւ, անիւ, կաւ. ինկաւ.
անիւին տակ պարան ինկաւ



Մուկ ու կատու
ուս. սուս. սուտ
սուր. տուր. Մուր
Իմ կատուս սուր ատամ ունի
սա կատուն տար տուն
կատուս պապիկի ուսին





ուլ

ուլիկ, իլիկ

լու, լուր. լաւ լուր.
լար, կու լար, մի լար.
այր ո՞ր, լուսին. սարի ուսին





կըկու

տիտիկ ըրի. տիտիկ ըրաւ
ըսի, ըսի. մըտիկ ըրաւ
կըկուն ըսաւ՝ կո՛ւ կու, կու կու
կատուն ըսաւ՝ միա՛ու, միաու
ուլիկը ըսաւ՝ մը-կը-կը-կը՜







Ելակ

Ես լաւ ելակ ունիմ.
Եկուր ելակ տամ
Եւ ան եկաւ, ելաւ ելարանը.
Երկա՜ր, երկա՜ր ելարան մը



1 Մէկ ու երկու 2

տէր, տէր-տէր, տանուտէր
ո՞վ էր երէկ իրիկուն
տունն էր. կիրակի էր.
Մէկ, մէկ ալ կ՚ըսէ երկու,
կուկուլի — կո՜ւ.





# Մամիկը

Ան է Մարիամ մամիկը։
Ան ալ Մարիամ մամիկին
թոռ պզտիկը ։
Անոր գրչիկը, անոր գնդիկը,
անոր մանկիկը ։
Ան ուրուրը Կապուրը ։
Ան ալ Արամը սուրատանը։
Մէկը Մինասը. մէկը Արամը,
մէկը լալկան Կարան ։
Ան ալ ես, անունս Նշան.
ալ լաւ բռնած ։



# Արամին ձուկը



Կար անգամ մանուկ մը
Անունը Արամ ։
Պզտիկ ձուկ մը տեսաւ Արամը
աւազանին ջրին ։
—Պապիկ, ձուկը, ձուկը.— ըսաւ
մանուկը ։
Կայտառ ձուկը ջուրին ու
ձուկը գնաց ։



—Ձուկս, պապիկ, ո՛ւր
իմ ձուկս, ո՛ւր իմ պզտիկ
ձուկս.— կանչեց լալ
մանուկը ։



Նունիկն ու իր ուլիկը

— Ուլ՛, Ուլ՛, ո՞ւր է իմ ուլիկս. ըսաւ Նունիկը:

— Ելաւ կտուրը, Նունիկ:

— Անպիտան ուլիկ. Իջի՛ր, իջի՛ր կտուրէն, Ուլ: Եկ ըրէ՛ իմ ուլիկս:

Ուլն իջաւ կտուրէն, 
եկաւ ըրաւ: Եւ Նունիկը
գրկեց գարան իր ուլիկը:



Ն, ն,



Արտամիր Շուշիկը

Շուշիկը մայրը բարակ մը շարան կերպաս: Ըսաւ.

— Շտէ՛պ: Ասոր ճերմակ մը տո՛ւր: Նա գունիկ մը տո՛ւր: Երկու կարմիր մատիկ տո՛ւր: Երկար պարան մը տո՛ւր: Շուշանիկս ալ ետ տո՛ւր:

Շնուն-կատուն

Շուկ, բաւ — Տուաւ:
Կատուն եկաւ միւնէ, միւնէ
— Շոմինէ:

Լ, Շ,

## Արեւ ու ամպեր

Սեւ սեւ ամպը եկեր է,
սարի ուսերին նստեր է,
պարտէզները նեղեր է,
Մեր արեւը կապեր է :

Արեւ, կապերը կտրէ՛,
սեւ ամպերը ետ քշէ,
եկո՛ր, եկո՛ր լուսերես,
լուսերեսը սիրեմ ես :

## Անուն-կապուկ

Մինակ, մինակ — Արմենակ.
Կարմիր կարպէտը — Կարապէտը.





## Լորիկ



Լեւոնը մորքներում գտակը գցելով լորիկ մը գտաւ :

Լորիկը մինակ էր, կը մրսէր :

Լեւոնը լորիկը տարաւ տուն եւ մօր կորեկը անպակաս ըրաւ .

Ամիսէ մը ալ ուր էր ան գնդլորիկ մսակոր լորիկը :

Կոկիկ կըլորիկ լոր մըն էր անիկա .



## Ողորիկ-գողորիկ

Մեր Պետրոսը պզտըրիկ
կը պըտըտի գողորիկ-գողորիկ :

## Արև ու ամպեր

Սև սև ամպը եկել է,
սարի գլխին նստել է,
պարտեզները նեղել է,
Մեր արևը կապել է :

Արև, կապերը կտրէ՛,
սև ամպերը էլ քշէ,
եկի՛ր, եկի՛ր լուսերես,
լուսերեսը արեծես :

Անուն-կապուկ

Կինակ, Մինակ — Արծնակ.
Կարմիր կարպետ-Կարապետ :



## Լորիկ



Եւոնը մորենիներուն մէջը
գետնին վրայ լորիկ մը գտաւ :
Լորիկը հիւանդ էր, կը մրսէր :
Եւոնը լորիկը դրաւ տուն եւ
անոր կերակուրը անպակաս ըրաւ.
Ամիսէ մը ալ ո՞ւր էր ան
գեղեցկորիկ մեծցուց լորիկը :
Հոկիկ կլորիկ լոր մըն էր
անիկա.



Սորիկ-գորիկ

Մեր Մեսրոպը պզտիկ
կը պտըտի գորիկ-գորիկ :

Էշ   շուն

Սիրելի Աշոտիկ.

Ես գյուղի եւ ալ աշակերտ եմ. աշունքէն ուսումի եմ մտել. շատ լաւ է: Դպրոցը իմ ընկերն է, եւ Ուսուցիչն ալ, Խմբավարը, Սուրիկը, Դպրոցում, ուրիշներ ալ շատ կան:

Ահա, մի շունը եւ եմ նկարեր, մի էշն ալ: Նկարելը շատ կը սիրեմ. շուտ-շուտ կը նկարեմ:

Արշակես

Պաչեմ, գրաչես—Արշակես:



Մեղու



Արեւը շողը թափեր է սարին,
ուղիղ կապույտին
բզզ, բզզում, բզզ:
Մեղուն ելեր է իր նեղուին գումնէն,
ծաղիկ եղեւեն
բզզ, բզզում, բզզ:
Ով գիտի քնած կանուխ անկողին,
աղամն մէկ կողին.
բզզ, բզզում, բզզ:

Ա 1/5 9645



Աղունակը եւ Աղավնիկը
Աղունակը՝ ղու՜, ղու՜.
Աղավնիկը՝ ադու՜, ադու՜:



[library stamp]



## Մեր կովը

Մեր կովին անունը Մաւի էր։ Մաւին շատ վատ էր սորվեր. կը մտնէր ուրիշի արտերը. կ'ուտէր ու կը կոխոտէր

Մէկ իրիկուն մին ալ մտեր է վարպետի Մովսէսար կորեկը։

Մովսէսար գիտեր է ու էշանով բռներ է կովին եղջիւրէն։

Մովսէսը ծու-ծու ընելով տուն էկաւ. կովոցին մէկը կողմէր էրին։



4

## Տրեխը



Տրեխները մտեր էին գետակը լողալու. Մեխակն ալ մօտերն էր. շատ ուրախ էր ու ամենէն աւելի կը խաղար։

Տան վերադարձէն. գլխուն խոշոր շուն մը իրեն խոտերուն գրաւ կաշիր կտոր մը կուրցեր։

Մի՛ ըսէք, Մեխակին հօր տրեխն է եղեր։



ուրախ Մեխակը



տխուր Մեխակը



## Խուլ Բաւկը

Խոնաւ աշուն իրիկուն մըն էր. Բաւկը շալակով կաւ կը կրէր իր տան կտուրը կարկտելու:

Մէկը ըշտապ ետեւէն եկաւ ու կ՚աղաղակէր

— Բարեկամս, ա՛ բարեկամս, գիտե՞ս մեր շունը

— Աշունը...: Այո՛, եկա՛ւ աշունը.— ըսաւ Բաւկը:

— Իմ պատասխանս տուր, բարեկամս,





ըսաւ եկողը.— տե՛ս, ուշ է ուշ:

— Մըշուշ... իրաւ է.

Խոնաւ ու մըշուշ:



— Ես մեր շունը կ՚ըսեմ. ո՞ւր

կորաւ. անկէ եկա՞ւ, է:

— Կաւ է, շիտակ ես.

շալակներս կաւ է:

— Խե՞ւ է,— ըսաւ շան տէրը.— խեւ է կամ խուլ:

— Խարխուլ, խարխուլ. կտուրս ալ, պատերս ալ. տե՛ս, կը տանիմ կարկտելու.— ըսաւ Բաւկը ու Սուրբ ըսելով ելաւ կտուրը:

## Ռուբէնն ու Վարսենիկը



Ռուբէնը մատիկը արիւնու-
ցեր, մատը կտրեր էր։
Վախէն կու լար։

Վարսենիկը աւեղ մը
գտաւ ատոր ու ըսաւ.

— Մի՛ լար, Ռուբէնիկ, մի՛ լար. ցուր այդ մատիկը, եւ իմ աւեղովս կը կապեմ։

Ան ո՛վ է եկեր.

Տաւարդը, Վարդարը,
Տուշանը, Սրուշանը,
Տամբրը, Սրցաւրըր։







## Ղազարն ու իր խոզը

Ղազարը պզտիկ խոզ մը ունէր։ Խոզի վիզը ուռեր էր, մազերը ասեղի նման։ Պզտիկը ապառ ապառ կը փափկցնէր, ամէն օրեղ ճզմել կուզէր։ Ան ճզմէր ատամներն գրգռերը եւ աղուոր աղուոր կը փակէր շէնքին Ղազարի վերան։ Ղազարը շատ կը սիրէր իր աղուոր խոզը։



## Կաչաղակ

Այս ի՞նչ է եղեր,
պարո՛ն կաչաղակ,
այս ի՞նչ աղաղակ.
այս ի՞նչ չոր կանչ է:—
Իսկ կաչաղակը իրը կը կանչէ.
„Չը-կա, չէ՛, չէ՛. չը-կա, չէ, չէ„:

Ա՛, երկար-պոչիկ,
ի՞նչ ես կորուսեր,
ինչո՞ւ չես ըսեր.
Կեր չունի՞ս. ի՞նչ է:—
Իսկ կաչաղակը իրը կը կանչէ
„Չը-կա, չէ՛. չէ՛. չը-կա, չէ. չէ„:



## Չիր ու Չամիչ

—Չոր խաղողին ինչ կ'ըսեն, Չաւէ՛ն:
—Չամիչ
—Չոր սալորին ինչ կ'ըսեն, Չաւէն:
—Չիր.
—Չարճանալի խնամքուն է մեր Չաւէնը: Չարուկ, Չարուկ, չիր ու չամիչ տուր մեր Չաւէնին:

## Ճուճիկը և Ճանճիկը

—Որսը մերն է, մեր դաշն մերն է.— կ'ըսէր Ճուճիկը
—Որսը մերն է, մեր դաշն մերն է.— կ'ըսէր Ճանճիկը



## Սայլը

Սայլը կանգնել էր և տերը այն-տեղ չէր երևում։ Պզտիկ Զար-մայրը նստաւ վրան ու կը կանչէր.
— Հոյ, ես եմ սայլապանը, ես. էյ…
Ու մտրակով կը զարնէր եզներուն։
Հէյ հիմ ալ եզները սայլը քաշին.
Ծեր սայլապանը վրայէն կ'աղաղակէր.
— Վա՜յ, մայրիկ, վա՜յ. ընկած ալիքի, վո՜յ, վո՜յ…




## Սղոցն ու կացինը



Ատաղձագործը ըսաւ
— Բե՛ր այն սղոցը, սղոցը, ծառէս հերսան, կտրտըրտէց։
Իսկ պապը ըսաւ
— Բե՛ր, այն կացինը, կացինը, պարկաւ կողերս կոտրըրտէց։



## Ցեխ է

Պողակը մտրակը վերուց, փախէց։
— Ցեխ է, ընկնաս, կոտրես. — կանչէց մայրը երկէն։
Պողակը ցատկէց ու ինկաւ։
Ո՜յ. մտիկ չէս ըներ մայրիկը։



ա ո ու ը ի ե է

ա ո ու ը ի ե է

Ս ս | սա է, ես էի, ես ըսի, ըսի՝ ուսըս, սուս.

Մ մ | մամա, մամը, մամըս, աս է իմ մամըս.

Ր ր | ըրէ՛, ո՞ւր է, ո՞ւր էիր, սարը, սա սարերը.

Կ կ | կար, կիր, կիրակի, կեր, եկուր, կերակուր.

Ն ն | նետ, նոր, անոր, նըկար, նըմանը կա՞ր.

Խ խ | խոտ, խիտ, խոր, սեխ, սոխ, խակ, սոխակ.

Պ պ | պապ, պարոն, պարան, պարէ՛, կապի՛կ, պարէ.

Կարմիր պարկ մը կար, կարմիր պարկակապ մը կար. ո՞ւր է մեր կարմիր պարկը, ո՞ւր է մեր կարմիր պարկին կարմիր պարկակապը։



Տ տ | տե՛ս մամիկը միս կը տապկէ.
մամի՛կ, կըտոր մը տա՞ս ատկէ.



Ւ ւ | ան սև կատուն անիրաւ
միսը տարաւ և կերաւ.

Լ լ | ըլլար, ըլլար, կարմիր սալոր ըլլար.
կ՚ըսէր լալկանը ու կու լար.

Շ շ | ուշ, նուշ, անուշ, անուշակ,
կապ մը շուշան, մանուշակ.

Զ զ | զուտ, զատ, ազատ, զանազան,
աւազ, աւազակ, աւազան։

Հ հ | ան ի՞նչ է. լեզու մը ունի՝ լեզու չէ,
մեզի կը կանչէ, մեզմէ չէ. ան ի՞նչ է.

Ղ ղ | կը խաղաս, տըղա՛ս, շատ կը խաղաս.
ուսումի պիտի կաղաս.

Վ վ | վըտակը ըշտապով կը վազէ վար,
վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ ըսելով.

Յ յ | ա՛յ, իմ մայրիկիս պէս մայրիկ ո՞վ ունի.
այնպէ՛ս կը սիրեմ մայրիկըս.

Ց ց | աշունը անցաւ, ցուրտ է. ալ տերեւ չի մընաց,
անցան, ցիր ու ցան եղան,



## Իմաստուն Արտաշէսը

— Արտաշէ՛ս, անուն մը տա՞ս, — ըսաւ Սուրէնը իր ընկերին։
— Անո՞ւն մը։ Մեր Մեխակը։
— Մեխակը, Մեխակը, սեխերուն խակը, — ըսաւ Սուրէնը։
— Խա՞կը։ Իսկ մեր Իսա՞կը։
— Իսակը. ա՜, մատնիքիս ակը։
— Ա՜.– ըրաւ Արտաշէսը անոր նըման։
— Նոր անուն մըն ալ տո՛ւր։
— Խորէ՛ն։
— Ատ շա՛տ էր խորէն։ Նորէ՛ն ըսէ, նորէն։
— Կ'ըսեմ՝ Կատարինէ՛։
— Սարի կատարին է։

Ս Ա Մ Ն Կ Ր Խ



— Կ'ըսեմ՝ Սիրանուշ։
— Մատ մը սեր ուտեմ, մատ մը անուշ։

* * *

— Ըսպասէ՛, ըսպասէ՛, ես ալ կըրնամ.— ըսաւ Արտաշէսը։ — Անո՛ւն մը տուր։
— Տա՛մ։ Պարոն Պետրոս։
— Պարոն Պետրո՞ս, Պետրո՞ս,—կը կըմկըմար Արտաշէսը ու կը մըտմըտար։
— Շո՛ւտ, շուտ,—ըսաւ Սուրէնը։
— Չէ, ուրի՛շ մը ըսէ։ Լա՛ւ ուրիշ մը։
— Ըսեմ։ Ղազար. Տիրան. Եւնիկ. Շուշան. Նունէ։ Լա՞ւ է։
Ընկերը միշտ կը մըտմըտար։
— Վասակ, Զաւէն, Ղո՛ւկաս, Ցոլակ, Ներսէս, ալ կ'ուզե՞ս։
— Չեղա՛ւ, չեղա՛ւ։ Զատ զատ ըսէ՛։
— Չեղա՞ւ։ Եսայի։ Շաւարշ։ Վաղարշ։ Եսաւ։ Նորէ՞ն չեղաւ... Ա՜, իմաստուն Արտաշէս։ գո՛ւր կայներ ես, սիրտ կը մաշես։

Տ Պ Ե Լ Ը Վ Ղ Շ Ջ Չ Ց



## Տիկնիկը տկար է

Պզտիկ Աշխէնը նստեր է տրտում, տխուր։

Խաղի ատեն տիկնիկը վար էր ինկեր ու ճմլեր էր վիզը։

Աշխէնը մայրիկէն կտոր մը կտաւ ուզեց ու տիկնիկին վիզը կապեց։

—Կամա՛ց, Մկրտիչ, կամաց պոռէ, տիկնիկս տկար է։

## Ցուրտ իրիկուն մը

— Նշա՛ն, ի՞նչ կը տեսնես լուսամուտին ետեւէն։

— Կը տեսնեմ՝ կտուրները մտեր են սպիտակ սաւանի տակ ու կը մսան։

Կը տեսնեմ՝ կատու մը նստեր է կտուրը ու ցուրտէն կը մլաւէ։



Կը տեսնեմ՝ վարը տղան կը մրսի ու մրսելէն կը վազվզէ։

Կը տեսնեմ՝ արեւը մայր կը մտնէ պղտոր ամպերուն ետեւը։





## Վառարան



Սառն իրիկուն մըն էր։ Մառախուղը կոխեր էր լեռ ու անտառ։ Ներսը լուռ էր։

Պառաւ կատուն կլոր պառկեր էր վառարանին ետեւը ու կը մռմռար։ Սառան ալ նստեր էր աչուկները կրակին, կը մտմտար.

Երնէ՜կ շուտով կանաչէին ուռիները, շուտով կարկաչէր առուն, խայտային կայտառ ուլիկները, ուրախ-ուրախ շողար արեւը։ Ա՜խ, ո՜ւր է ամառ ըլլար, ամառ։

Կռունկները

Աշնան՛, Աշնան, աշնան՛, Ցուրտը
կռունկները տարին կռկռալով,
կռռ. կռռ. կռռ։





## Զորս ոչխար

—Շողե՛ր, ա՛ Շողեր, ոչխարները մտեր են պարտէզ, ոչխարները ։ Վազէ՛, կանաչ ոստերը չուտեն ։

—Ի՞նչ ոչխար, մամի՛կ, ո՞ւր է ։

—Ա՜յ չո՛րսը, խո՛շոր, սպիտա՜կ ։

—Ես ոչինչ չեմ տեսներ. որո՞ւնը պիտի ըլլան ։

—Ի՞նչ իմանամ՝ որունը ։ Վազէ՛, շուտ ըրէ՛ ։

Շողերը առուներէն ոստոստելով շտապեց ու տեսաւ, որ մացառներուն վրան չորս շապիկ էին նետեր չորնալու. ատ շապիկներն էին, որ պառաւին ոչխար էին երեւցեր ։



Մեր որսկանը

Սա, Սեւերի որսկանն է սա, մեր շէնքի ամէնէն վարպետ որսկանը ։ Եր-ռակ որսէն է եկեր ։



## Ռուզանիկի առտուն

—Ո՞վ է տարեր շապիկս ։ Ոտնամաններս ի՞նչ են ըրեր ։ Ո՞ւր է կապիչները ։

Այսպէս կ'ըսէ Ռուզիկը ամէն առտու անկողինէն ելնելուն պէս ։ Ոտները մերկ-մերկ կը պտըտկի՝ ամէն կողմ իր կորուստը որոնելով ։

Ոտնամաններէն մէկը սեղանին տակն է, մէկալը անկողնին ետեւը, իսկ կապիչները ուրիշ կողմ ։

Ուշ է. ընկերները շատոնց ուսումնարանն են, իսկ Ռուզիկը նո՛ր-նոր իր սանրը կ'որոնէ, որ մազերը սանրէ ։



Ո՞վ է սա

Ոսկանը, Արմենը, Ոսկանուհին, Ոսկանը ։ Ան, քոյրն է, քրոջ Ռուզանը, Ռուզանը ։



## Լայն հովանոցին տակը

Ըսես հեղեղ կը վազէ ամպերէն. հովն ալ կատղեր է, կը սուլէ հեռուներէն։

Իսկ Սահակը պահ է մտեր հայրիկին լայն հովանոցին տակը ու կը պտըտի։

Ո՜հ, Սահակին համար հեղե՞ղը ինչ, հո՞վը ինչ։ Այնպէս լա՜ւ է հայրիկի լայն հովանոցին տակը։

### Մեղր ու չամիչ

Մեղրի համը քաղցրիկ քաղցրիկ,
չամիչինը՝ [illegible] [illegible].
համը [illegible], համը [illegible],
[illegible] [illegible] [illegible] :





## Մկներու ժողովը

Վերժինը պառկեր էր, իսկ մկները ելեր էին անոր սեղանը. ուտելու շատ ախորժակ ունէին։

Շիտակ խուժեցին մելանի վրան, հոտոտեցին, շարժեցին ամանը, համը առնել չի կրցան. ամանին վիզը նեղ էր։

Այն ժամանակ տետրակի մը վրան նստեցան ժողովի՝ ի՞նչ ընեն որ համը տեսնեն։

—Սպասէ՛, հիմա կը հասկընամ. — ըսաւ ժիր մուկ մը, ցատկեց ամանին վիզը, երկար պոչը կոխեց մելանը, հանեց ու հրամցուց ժողովին։

Ընկերները համը առնելնուն պէս ելան ու կորան։

Իսկ Վերժինը առտուն շատ էր զարմացեր.

—Աս ի՞նչ է, ասո՞վ է խըզմըզեր տետրակներս...



Կուժն ու կուլան
[illegible] կու լան :





## Մայրիկին թիթեռնիկը

— Տո՛ւր, թերթ մը թուղթ տուր, մայրիկ, թերթ մը թուղթ, թեւեր պիտի շինեմ. թիթեռնիկ պիտի ըլլամ.

Եթէ թիթեռ մը ըլլամ, նաշխուն թեւերս այսպէս թեթեւ պիտի շարժեմ ու պիտի թռչիմ ամէն տեղ. տերեւէ տերեւ պտուղէ պտուղ։

Մա՛յրիկ, թուղթ տուր, թել ու ասեղ. թեւեր պիտի կարեմ, թիթեռնիկ պիտի ըլլամ։

## Լաւ աղջիկը

Պառաւը թոռներէն մէկին մէկին լաւաղջիկը կը հաւնէր ու կ'ըսէր թոռնիկներուն.

— Սա իմ Մարգրիկին, սա իմ Արթիկին, սա ալ անուշիկ իմ Սաթէնիկին։



## Ժիր աշխատաւոր



Թի՛կ-թակ, թի՛կ-թակ,
ան ո՞վ է հոն
ապակիին տակ։
Ժիր ու արթուն
կ'աշխատի,
թէ լուսի տակ,
թէ մութի։
Թի՛կ-թակ, թի՛կ-թակ,
ան ո՞վ է հոն
ապակիին տակ։

## Թութակը



Ժամանակով թութակ մը ունէր Ժէնիկը։ Թութակը միշտ կը կրկնէր.

— Ո՞ւր, ուր ո՞ւր։ Ժա՛մ, ժա՛մ։

## Այծը



Պայծառիկը այծ մը ունէր։ Այծը ամէն առտու կ'երթար արածելու։ Պայծառիկը կը շոյէր իր այծիկը ու կ'ըսէր.

— Վազէ՛, այծի՛կս, վազէ՛, ելի՛ր ժայռերուն ծայրը, մօտի՛ր կանաչ խոտերը, ծիլ ու ծաղիկ կրծէ՛, և իրիկունը լեցուն ծիծերով եկուր տուն։ Մայրիկս կաթ կթէ, ինծի համար սեր ու մածուն շինէ։

Այո՛, այո՛, ծիլն ու ծաղիկ մեր այծիկին, սերն ու մածուն Պայծառիկին։

Ծառին ճիւղին վրան

Ծեր ծառին ճիւղին վրան ծիտիկները կծկտեր էին ու կը ծուծրուան.

— Ցուրտ է, ցուրտ. ծի՜, ծի՜։



## Ժամ



Ժամկո՛չ ախպար, ժամկո՛չ ախպար,
ո՞ւր կ'երթաս։
Ժամի պզտիկ կոչնակնե՞րը
պիտի տաս։
Ծի՜մ-պի՛մ-պիմ,
ծի՜մ-պի՛մ-պիմ։
Ժամկո՛չ ախպար, ժամկո՛չ ախպար,
ո՞ւր կ'երթաս։
Ծանր ու մեծ կոչնակնե՞րը
պիտի տաս։
Թո՜ւմ-պո՛ւմ-պում,
Թո՜ւմ-պո՛ւմ-պում։

Ծերուկը

Ծերացեր է Ծովինարի պապիկը, շատ է ծերացեր։ Ծունկերը թուլցեր են, կռնակը ծռեր է, ակռաները ինկեր են ու ծամել չի կրնար։

## Շերեփը

Արփիկն ու Ստեփանը տիկնիկի համար կերակուր կ՚եփէին։ Արփիկը թաշկինակը փռեց սփռոցի փոխարէն և լուցկիի տուփիկները շարեց վրան պնակի տեղ։ Սեղանը պատրաստ էր։



Իսկ Ստեփանը փայտի կտոր մը տաշեց, տաշեղը լեցուց հին տուփ մը, և եղաւ ապուր։

—Շերե՞փը հապա. ապուրը ինչո՞վ պիտի խառնես.—հարցուց Արփիկը։

Ստեփանը շիփ-շիտակ վազեց խոհանոց և վերցուց փայտէ մեծ շերեփը։

—Ահա՛, փայտէ շերեփը փայտէ ապուրին.—ծիծաղեցաւ մայրիկը։



### Անփոյթ փիսիկը

Ան ծոյլ է պառկեր, կը
ճմռէ Արփիկի փափուկ անկողինը։
Ելի՛, անփոյթ փիսիկ, փսիկի՛կ.
Մայրիկս եկաւ, փսիկի՛կ :





## Անքուն աքլոր



—Արաքսի, Մելքոն, ելէ՛ք, հերիք է, այսքան չէն քնանար.—կ՚արթնցնէր մայրիկը։

—Ա՜խ, թո՛ղ, մայրիկ, թող, քնանանք, քունէն կշտանանք։

—Ելէ՛ք, ուշ է, աքլո՛րը կանչեր է երեք հեղ։

—Ի՜հ, աքլո՛րը, աքլո՛րը։ Ինքը քուն չունի, կանուխ կ՚ելնէ ու սուտ-սուտ կը կանչէ։ Անոր կանչին մի՛ հաւտար, մայրիկ.—նեղացաւ Մելքոնը և վերմակը քաշեց աչքերուն։

---

### Թանով սպասը

Մէկ, երկու, երեք՝ համեցէ՛ք կերէք.
ութը, ինը ու տասը՝ թթու թանով սպասը։

---

### Մեղրէ անուշ

Մեղրը քաղցր է շաքարէն,
քունը մեղրէն, շաքարէն :

## Լամպը և արևը



Փոքրիկ լամպ մը նոր էին վառեր ու թողեր էին պատուհանը։ Քիչ մը նայեցաւ հոնկէ, տեսաւ հեռուն՝ սարերուն ետեւը՝ արեւը մայր կը մտնէր։

Լամպը նայեցաւ, նայեցաւ ու ըսաւ.

— Քեռի՛, չիտակը ըսեմ՝ լաւ ես։ Փառաւոր կը լուսաւորես։ Թէև ի հարկէ ինծի չես հասնիր։

Քամին աս որ լսեց՝ ծիծաղը զսպել չը կրցաւ.

— Փո՛ւ՝ որ ըրաւ, լամպը մարեցաւ։

### Քեռի Փիլիպպոսը

Քեռի Փիլիպպոսը շատ լաւ հեքիաթ կը պատմէ։ Փոքրիկները գիտեն թէ չէ, պիտի աղաչեն

— Քեռի, քեռի, հեքիաթ պատմէ մեզի։





## Աներես ճանճը



Տաճատը կը ճաշէր։

Տը՜զզ. ճանճ մը եկաւ, նստեցաւ անոր քթին։ Տաճատը թեւով քշեց։

Տը՜զզ. ճարպիկ ճանճը նորէն եկաւ ու նստեցաւ տղու ճակտին։ Տաճատը նորէն քշեց։

Տը՜զզ. աներես ճանճը թռաւ չիտակ Տաճատի պնակին եզերքը, կնճիթը երկնցուց ու սկսաւ անուշ ընել անոր ճաշը։

Քը՜շ, անզգամ ճանճ, ճաշս չեմ տար քեզի. — պոռաց Տաճատը զայրացած ու պատառաքաղը այնպէս ամուր զարկաւ, որ պնակը փշուր-փշուր եղաւ։



### Կը ծռռան

Ծամուկ գետի մը կեցեր են
ծղրիդները ծռռծռռան,
լոյսն ինչ է մոռցեր են
ու ծռռ, հա, ծռռ կը ծռռան։



## Հաւերը

—Է՜ խնամի Խորան, խնամի Խորան։
—Հը՛, ի՞նչ է ան։
—Հաւերս կորան, հաւերս կորան։
—Մեր տունն են, չէ՛, չկորան։
—Հա՞։ Քշէ՛, ետ երթան, քշէ՛ երթան։
—Քը՛շ, քը՛շ, քըշ... Քշեմ, քշեմ, չեն երթար.
—Է՜յ, խնամի Խորան, թէ՛ ուզես՝ կ՚երթան, թէ ուզես՝ կ՚երթան։

## Ճնճղուկները

Ծուտիկները կը ճըւային, ճի՜ւ, ճի՜ւ, ճի՜ւ։
—Ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ, ի՞նչ կը հաճիք. — հարցուց մայր ճնճղուկը։
—Ճի՜-ճո՜ւ, ճի՜-ճո՜ւ.—ճըւճըւացին ծուտիկները։



*Հոլ*

*Հոլ մը ունի Յ-մինը։ Ձայնը է մրրուկ մը, կը պտտի; հա. կը պտտի։ Ձայնիկ հոլ խաղցող է Յ-մինը։*



է, հ, ճ



## Վա՜յ, գայլը

Տիգրանն ու պզտիկ Թորգոմը գառները տարեր էին արածելու։ Կեցեր էին անտառին քովը՝ գետակին ափը ու կը նայէին։ Մէյ մըն ալ տեսան՝ որ գառները իրար անցան։

—Վա՜յ, գա՜յլը, գա՜յլը. — պոռաց Թորգոմը ու վախէն տեղն ու տեղը նստեցաւ գետին.
—Ո՞ւր է գայլը, ո՞ւր է։
—Ա՜յ, գերաններուն ետեւը։
—Զանգի, Զրանգի, հասէ՛ք.—նշան ըրաւ Տիգրանը իր ահագին շներուն, ինքն ալ առաւ մահակը ու արագ վազեց։

Իսկ գազանը փախաւ անտառին խորը ու կորաւ։

—Ա՜յ, ա՜յ. — ըսաւ Տիգրանը ետ գալով. — եկեր էր գառը տանելու. ի՜նչ տարաւ։
—Տարա՛ւ. իր կաշին անվնաս տարաւ. — աւելցուց Թորգոմը գողող-գողող գետնէն ելնելով։

*Ամբինէն կ՚ըսէր*
*Ես ալ գիր գրել գիտեմ*

## Կատուն ու գնդակը



Ա՛խ, գո՛ւ, կատու, ատ ո՞ւր կը գլտորես իմ գնդակը։ Մի՛ խանգարեր. դաս պիտի սերտեմ, հիմա դպրոց պիտի երթամ—ի զուր կը հասկցնէր Սեդրակը։

Փիսիկը անդադար կը ցատկէր ու կը վազվզէր գնդակին ետեւէն, կը դառնար տղուն չորս դին, մինչեւ որ Սեդրակը գնդակը խլեց անոր թաթիկներէն ու դրաւ դարակը։

Փիսիկը տրտում քիչ մը դիտեց դարակը ու սուսիկ-փուսիկ ելաւ դռնէն դուրս։

## Երկու աշխատաւոր



—Կտրեմ, կտրեմ, անդադրում
դնեմ.— ըսաւ դանակը։
—Անուշ ճաշ ու եփ
տամ.— ըսաւ դգալը։



դ



## Սագերն ու բադը

Նոր բադ մըն էին բերեր բակը։ Աչքին ինկաւ, անդին ինկաւ ուտելու բան մը ճարելու համար ու բաց դարպասէն ելաւ դաշտը։

Տեսաւ՝ չորան մը սագ լընգ-լընգալէն կու գար դէմը. բոլորն ալ բամպակի պէս ճեփ-ճերմակ։

—Ա՜, բարեւ, տիկին սագեր,— ըսաւ բադը.— աս ուրկէ՞ այդպէս մաքուր-մաքուր։

—Մեր գետակէն, բլուրին տակէն։ Եւ ինչ գետակ, ինչպէս խտակ. խոկ տիղմի տակ համով որդեր ամէն տեսակ։

## Առած

Հաց՝ բերանդ բաց։
Հաց ու պանիր, կեր ու բանիր։

բ

## Պարոն գլխարկը



—Ես ալ արդէն մեծ պարոն եմ.— ըսաւ փոքրիկ Գեղամը, դրաւ Գասպար պապիկին լայն գլխարկը ու երթալ կ'ուզէր։

Դռան սեմին անոր դէմը ելաւ Գասպար պապիկը ու խնդաց.

—Է՜յ, պարո՛ն գլխարկ, պարո՛ն գլխարկ, ատ ո՞ւր կը տանիս իմ Գեղամս։

## Բադիկ

Բադի՛կ, բադի՛կ, ատ ո՞ւր բարով,
ատ կաս-կարմիր մաշիկներով,
տոտիկ-տոտիկ ատ ո՞ւր բարով։

## Ազգականներ

Դաւիթը Գոհարիկի եղբայրն է.
Գոհարիկն ալ Քաջկէնի մայրն է։
Դաւիթը Քաջկէնի քեռին է։

Գ, Դ, Բ





## Օրօրոց

Օրօր, օրօր սիրունի՛կս
օրօր ըսեմ, քնանաս.
երկար օրեր, կարմիր արև,
բաղդ ու խնդումունենաս։

## Հօրեղբայր Խէչօն



Ասիկա իմ հօրեղբայր Խէչօն է։ Տօն օրերը նոր կօշիկները կը հագնի, կը կապէ լայն գօտին ու չիբուխը բերանը՝ կ'ելնէ զբօսնելու ծանօթներուն հետ։

## Կարօտ

Օննիկը եկեր է օտար քաղաք ուսումի։ Այնպէս իր հօրն ու մօրը կարօտը կը քաշէ։

օ, Օ



## Պզտիկ ջաղաց մը

Սարի լանջէն առու մը կը վազէր և մրմնջելով կու գար կ'անցնէր Բագրատենց բանջարանոցին մէջէն։ Բագրատի ամենէն սիրած տեղն էր այդ բարակ վազող ջուրը։

Տաշեղի կտորներէ ջաղաց կը շինէր վրան և ժամերով անխօս ականջ կը դնէր ջուրի խոխոջին։

Եւ ինչպէ՜ս արագ, ինչպէս թեթեւ կը դառնար ջաղացին անիւը։

*Մեր գիւղը*

*Խուլ ու մունջ է գիւղի Մկօն։ Առտու իրիկուն տակառը շալակին ջուր կը կրէ մեր թաղին մէջ։*





## Վերջակէտը



Ջանասէր աշակերտ էր Ջալալը։ Իրիկուն մը նստեր էր դասը կը սերտէր։

Մէյ մըն ալ մայրը նկատեց, որ տղան գլուխը դրեր է սեղանին ու կը նիրհէ։

—Տղա՛ս, ի՞նչ ունիս, ինչո՞ւ չես աշխատիր.— հարցուց մայրը անհանգիստ։

—Վերջակէտի եմ հասեր, մայրի՛կ.— պատասխանեց Ջալալը։— Վարժապետս ըսաւ՝ վերջակէտի որ հասնիս, քիչ մը հանգիստ ա՛ռ։

*Մեղուն*



*Ջերմ արևին տակ մեղուն կը վըզվըզար։ Զոկ-զոկ կ'այցելէր ամէն մէկ ծաղիկ. մեղր կը ժողվէր իր փէթակին համար։*



## Սիրունիկ յոպոպը

—Մայրի՛կ, մայրի՛կ, նայէ՛ հոն, յունապի ծառին, ան ի՞նչ թռչուն է սանրը գլխուն։

Մայրիկի փոխարէն յանկարծ թռչունը ինքը պատասխանեց ծառէն. «յո՜պ-ոպ, յո՜պ-ոպ»։

## Շատ յաջող դաս մը



Կարդա՛, ա՜յ շուն, կարդա՛ տեսնեմ,
չե՞ս յիշեր.
քեզի այնքան ես կրկներ եմ
այս գիրեր։
Ի՞նչ կը նայիս յիմարի պէս
տետրակին,
պոչդ յամառ պինդ կը զարնես
յատակին։
Ի՞նչ ալ լա՜ւ-լա՜ւ կը յօրանջես,
յոգնե՞ր ես...
չէ՛, ուսումի դուն յարմար չես,
կը ներե՛ս։



## Շուկայ

—Ա՜ տղայ, աս ի՞նչ ծանր է գրպանդ. մէջը ի՞նչ կայ.—հարցուց մայրը Հրանդին, որ նոր հաներ էր հագուստները և պառկեր։

—Իմ բաներս են, մայրի՛կ, տեղը դիր ու նայէ՛, որ մարդ չը մօտենայ.—պատասխանեց Հրանդը ու գլուխը կոխեց վերմակին տակ։

Իսկ մայրը պարպեց գրպանը սեղանին վրայ։ Ալ ի՞նչ ըսես որ մէջէն դուրս չը գայ. ժանգոտ բանալի մը, ծայրը կրծած մատիտի կտորներ, գուլպայ գործելու թել, վէգեր, կոճակներ, փայտէ ուխտար մը՝ մէկ ոտքը կայ մէկալը չը կայ. օղակներ, քարեր և վերջապէս այդ ամենուն տակը Հրանդի աղտոտ թաշկինակը։

—Ա՜խ, դուն, սատանա՛յ, ասանկ ալ գրպան կ՚ըլլա՞յ, կարգին շուկայ է ասիկա.—ըսաւ մայրը ու ի՜նչ կը խնդայ։

Մայրը կը խնդայ, իսկ տղան արդէն անո՜ւշ-անո՜ւշ կը մշմշայ։

## Հանելուկ

Կ՚երթայ կ՚երթայ՝ ճամբայ չը կայ,
ճամբայ կ՚երթայ՝ փոշի չը կայ։

## Քաջ ձիաւորը



Ով է տեսեր Գէորգի նման ձի հեծնող։ Հօրը գաւազանը ձեռք ձգեց թէ չէ, կը հեծնէ ու ձայն կու տայ.—Էհէ՜յ, կ՚երթամ Գանձակ, տանձ ու խնձոր բերեմ ձեզի։

Կ՚ըսէ, կը քաշէ սանձերը, կը զարնէ մտրակը ու, հայտէ՜, հրեղէն ձին կը դառնայ ու կը դառնայ։

Մեր ձիաւորի թեւերուն տակը ալ ձմերո՞ւկ կը սղմի։

### Շուտասելուկ

Մուկը նետեմ, ձուկը ուտեմ,
ձուկը ուտեմ, մուկը նետեմ։

### Ես

Ես շատ շէռքով կը նկարեմ.
շաքըլիկ եմ։



## Գեղ ունեցողներուն սեղանը

Ճաշի ատեն Յակոբը և իր եղբայրը առանձին սեղան կը նստէին։

—Հայրիկ,—ըսաւ օր մը Յակոբը.—ինչո՞ւ մեզի ալ ձեր սեղանը չես առներ։

—Ձեր պէտքերը դեռ չեն բուսեր, դեռ ժամանակը չէ.—պատասխանեց հայրը կատակով։

Այդ միջոցին Յակոբին մօտեցաւ իրենց սեւ ու խոշոր կատուն։

Ձայնը ձգեր էր կը մլաւէր ու ճանկռտելով Յակոբի փէշերը, իր բաժինը կը խնդրէր։

—Ձեր սեղանը կոխէ՛ր, սեւուկ,—բարկացաւ Յակոբ։—Նայէ՛, աճապին պէտքեր ունիս դուն։

### Ձկնորս



Ձկնորս Յովսէփը ջորին
մէջ ամբողջ գիշերը կաց-
ուցրի. յոգնիլ չգիտէ։
Ձուկ կը բռնէ, որ ծախէ։



## Մեր բակի զինուորները

Աստուած սիրես, աստնց նայէ, ինչպէ՜ս շարուեր են իրարու ետեւէ. Երուանդը, Մանուէլը, Յարութիկը, աս Պետիկը, ան կարճլիկը, ամբողջ գունդ մը։ Ան ինչպէս ալ հագուեր, սքուեր են, իրա՛ւ որ զինուոր։

Իսկ ան ո՞վ է հօն, որուն ամենքը բարեւ տուին, որուն գօտիէն կախուած է փայտէ սուրը։ Ա՜, սպայ է եղեր, պատուէրներ կու տայ։ Եւ ինչ զուարթ «կեցցէ՜» կը պոռան։

Կեցցե՜ն մեր բակի զինուորները։

## Աղուէսը

Փոքրիկ Նուարդը գիրք մը կը թղթատէր. տեսաւ աղուէսի պատկերը։ Աղուէսը հաւ մըն էր ճանկեր ու կը բզկտէր։

—Օգնեցէ՛ք, օգնեցէք — պոռաց Նուարդը. — Եկէ՛ք, ազատեցէք այս աղուորիկ աքլորիկը չար աղուէսին բերնէն։

ու—ւ





## Փըֆ-փուֆ

Սօֆիկը գացեր էր հայրիկին հետ հեռու քաղաք։ Առաջին անգամ երկաթուղի էր նստեր։ Ճամբան շուարած ականջ կը դնէր երկաթուղիի հանած աղմուկին՝ փըֆ-փուֆ, փըֆ-փուֆ։

Տուն վերադառնալուն պէս Սօֆիկը հպարտ հպարտ վազեց քրոջը վրայ.

—Գիտե՞ս, Ֆլօրա, ես փըֆ-փուֆ եմ նստեր։

Ֆէսը

Օֆ, ուր է ֆէսս. ով է առեր ֆէսս.— կը փնտռէր Ֆարամը ամէն կողմ։

Ֆարամը բլուր կը փնտռէր. ֆէսը գլուխն էր։

ֆ, Ֆ

## Քոյր ու եղբայր

Գարոյը երկու ընկոյզ ունէր ձեռքը, իսկ քոյրը գրքոյկ մը։

—Գարո՛յր, — ըսաւ քոյրը. — Գիտե՞ս ինչ աղուոր հէքիաթ մը կայ գրքոյկիս մէջ։

—Ցոյց տո՛ւր նայիմ, պատմէ՛. — վրայ բերաւ Գարոյը իսկոյն։

—Եղեր է չէ եղեր, բարի տղայ մըն է եղեր. անունը Գարոյ։ Գարոյը ունեցեր է երկու ընկոյզ, մէկը ինքն է կերեր, մէկը տուեր է քրոջը...

—Ատ ինչ գէշ հէքիաթ է — ըսաւ Գարոյը ու փախաւ։



### Կոյր աշուղը

Ա՜խ, կոյր է ան,
փոքրիկ տղան,
որբ էր, մինակ.
և բակէ բակ
տխուր կ'երգէր.
«Է՜յ, պարոններ, երնէ՜կ անոր,
ով կը տեսնէ ամէն օր
կապոյտ կամար, արևի լոյս
ու երեսը անուշ մօր։»
Ա՜խ, կոյր էր ան,
փոքրիկ տղան,
որբ էր, մինակ։

ոյ=ույ ւ



## Զամբիւղը

Հօրաքոյրը գիւղէն եկեր էր Աւր։

—Բարև՛, բարև՛, հօրքու-րի՛կ,—կանչեցին փոքրիկները և աղմուկով վրան վազեցին։ Հօրա-քոյրը ձեռքի զամբիւղը դրաւ ա-թոռին ու ըսաւ.

—Հայպա՛, իմացէք նայիմ՝ ի՞նչ եմ բերեր ձեզի։

—Հաւկիթ... իւղ... պանիր... ալիւր... մեղր...—ագականչեցին մանուկները մէկը միւսին ետևէն։

—Չէ՛, չէ՛, կենդանի՛ է։

—Վառիկ... հաւ... բադ... սագ...

—Ո՛չ, ո՛չ։ Չորս ոտք ունի։

Գառ... հորթ... ոչխար... կով... գոմէշ...

—Ա՛խ խելօքներ, այս զամբիւղի՞ն մէջ։ Լաւ մտա-ծեցէք։ Երկա՛ր, երկա՛ր ականջներ ունի։

—Է՛շ.—պոռաց մէկը։

Ու բոլորը միասին խնդացին։

—Է՛հ, չիմացաք.—ըսաւ հօրաքոյրը ու ծած-կոցը բացաւ։

Զամբիւղին անկիւնը երկիւղէն կծկուեր էր ձիւնի պէս սպիտակ սիրուն Նապաստակ մը։

Ի՜նչ ուրախութիւն էր։

A 5 4/9

## Դէպի լուսնեակը



Լուսնեակը երկինքէն վ[...] կը նայէր շիտակ Արուսեա[...] սենեակը ու կը խնդար։

Արուսեակը, եօթնամեայ աղջիկ մը, պառկեր էր անշարժ իր անկողնին մէջ, կը նայէր լուսնեակին ու կը մտածէր։

«Երանի՜, երկա՜ր, երկա՜[ր] ելարան մը ըլլար իմ սենեակէ՜ս... մինչեւ լուսնեակը։ Ելնէի, ելնէի, հասնէի լուսնեակին, անոր լա՛ն ու բարի երեսին համբոյր մը տայի, գիշեր բարի ըսէի ու դարձեալ ետ գայի։ Արդեօք կարելի բան չէ՞։»

## Ընկերներս

Իմ ընկերներս են՝ Գայիանէ Գէորգեան, Հռիփսիմէ Մկրտիչեան և Լեւոն Յովհաննէսեան։

Իսկ իմ անունս է... Ան ալ դո՛ւն ըսէ։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
2[...]15

# ԱՅԲՈՒԲԷՆ

(Տառերուն կարգը եւ անունները)

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ա ա<br>այբ | Բ բ<br>բէն | Գ գ<br>գիմ | Դ դ<br>դա | Ե ե<br>եչ | Զ զ<br>զա |
| Է է<br>է | Ը ը<br>ըթ | Թ թ<br>թօ | Ժ ժ<br>ժէ | Ի ի<br>ինի | Լ լ<br>լիւն |
| Խ խ | Ծ ծ<br>ծա | Կ կ<br>կէն | Հ հ<br>հօ | Ձ ձ<br>ձա | Ղ ղ<br>ղատ |
| Ճ ճ<br>ճէ | Մ մ<br>մէն | Յ յ<br>յի | Ն ն<br>նու | Շ շ<br>շա | Ո ո<br>վօ |
| Չ չ<br>չա | Պ պ<br>պէ | Ջ ջ<br>ջէ | Ռ ռ<br>ռա | Ս ս<br>սէ | Վ վ<br>վեւ |
| Տ տ<br>տիւն | Ր ր<br>րէ | Ց ց<br>ցօ | Ւ ւ<br>հիւն | Փ փ<br>փիւր | Ք ք<br>քէ |
| | | Օ օ<br>օ | Ֆ ֆ<br>ֆէ | | |

## ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԸ

ա, ը, օ, ո, ի, է, ե, և

ու, ոյ, իւ, եա, եօ

րնչպէս եւ մեր
ապահուած է

րատան

ЦЕНА
А II
59645

1 n

Աա, Բբ, Գգ, Դդ, Եե, Զզ
Էէ, Ըը, Թթ, Ժժ, Իի, Լլ
Խխ, Ծծ, Կկ, Հհ, Ձձ, Ղղ
Ճճ, Մմ, Յյ, Նն, Շշ, Ոո
Չչ, Պպ, Ջջ, Ռռ, Սս, Վվ
Տտ, Րր, Ցց, Ււ, Փփ, Քք
և, Օօ, Ֆֆ.
1 2 3 4 5 6 7 8 9 0

Իմ ,
սիրէ Մկր.
Իսկ իմ ,